ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Պաշտոնական վիճակագրության մասին» (փաստաթղթային կոդ՝ Կ-252-02.02.2018-ՏՀ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացություն	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը
	1	2	3	4
ՀՀ ԱԺ պատգամավոր Խոսրով Հարությունյան	1. 4-րդ հոդված 2. 4-րդ հոդված, 35-րդ հոդված 3. 4-րդ հոդված 1-ին մասի 8-րդ կետ	1. Հիմնական հասկացությունների շարքում նպատակահարմար է ներառել և հստակեցնել նաև «վիճակագրական տվյալ» հասկացությունը, քանի որ սահմանված է միայն «վարչական տվյալ» հասկացությունը: Ակնհայտ է, որ «վիճակագրական հետազոտություն» հասկացության մեկնաբանությունն այս բացը չի ծածկում և առաջարկվող տերմինաբանական մեկնաբանության անհրաժեշտությունը առկախ է մնում: 2. 4-րդ հոդվածի վերնագրի «Օրենքում» բառն առաջարկում ենք փոխարինել «Սույն օրենքում», իսկ 35-րդ հոդվածի վերնագրի «Օրենքի» բառը՝ «Սույն օրենքի» բառերով: 3. ՄԱԿ չափանիշներով արտադրությունը ներառում է նաև տվյալների **վերլուծությունը,** մինչդեռ ներկայացված նախագծում տվյալների վերլուծության ասպեկտը բաց է թողնված ընդհանրապես:	1. Ընդունվել է, Հոդված 4-ի 1-ին մասում լրացվել է նոր՝ 2-րդ կետ, որով տրվել է վիճակագրական տվյալի հասկացությունը: 2. Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն: 3. Ընդունվել է, տեղի է ունեցել սպրդում, հիշյալ կետում լրացվել է «վերլուծություն» բառը:	1. Ընդունվել է 2. Ընդունվել է 3. Ընդունվել է

	4. 5-րդ հոդված	4. Առաջարկվում է հոդվածի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ «Ազգային վիճակագրական համակարգը և պաշտոնական վիճակագրության հետ կապված հարաբերությունների մյուս մասնակիցները»:	4. Ընդունվել է, կատարվել է համապա-տասխան փոփոխություն:	4. Ընդունվել է
	5. 7-րդ հոդվածի 2-րդ մաս	5. Առաջարկվում է «և նմանատիպ» բառերը փոխարինել «գերատեսչական» բառով:	5. Ընդունվել է, «և նմանատիպ» բառերը փոխարինվել են «գերատես-չական» բառով:	5. Ընդունվել է
	6. 7-րդ հոդվածի 8-րդ մաս	6. Առաջարկվում է «որոնք հակասում են» բառերից հետո լրացնել «սույն հոդվածին, ինչպես նաև» բառերը:	6. Ընդունվել է, կատարվել է համապատասխան լրացում:	6. Ընդունվել է
	7. 10-րդ հոդվածի 10-րդ մաս	7. Առաջարկվում է հանել «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ» բառերը:	7. Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	7. Ընդունվել է
	8. 10-րդ հոդված	8. 11-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Պետական խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցվելու դեպքում տվյալ պաշտոնում նշանակում կատարվում է այդ անդամի պաշտոնավարման	8. Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	8. Ընդունվել է

		չլրացած ժամկետով: Եթե այդ ժամկետը մեկ տարուց պակաս է, ապա այդ ժամկետով Պետական խորհրդի նոր անդամի նշանակում չի կատարվում:»:		
	9. 12-րդ հոդված	9. Հոդվածի վերնագրում «մարմինները» բառը փոխարինել «միավորներ» բառով: Միաժամանակ, առաջարկվում է 1-ին և 2-րդ մասերում «աշխատանքային խմբեր» բառերը իրենց համապատասխան հոլովաձևերով փոխարինել «խորհրդատվական միավորներ» բառերով:	9. Ընդունվել է, կատարվել է համապատաս-խան փոփոխություն:	9. Ընդունվել է
	10. 12-րդ գլուխ	10. վերնագրի «ԵԶՐԱՓԱԿԻՉ» բառը փոխարինել «ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ» բառերով՝ հիմք ընդունելով«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի կանոնները:	10. Ընդունվել է, կատարվել է համապա-տասխան փոփոխություն	10. Ընդունվել է
		11. Փաթեթին կից անհրաժեշտ է ներկայացնել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասում և «Գրադարանների եւ գրադարանային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում փոփոխություններ նախատեսող Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծեր:	11. Փաթեթին կից ներկայացվել են ««Հայաստանի Հանրապե-տության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և ««Գրադարանների և գրադարանային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը:	11. Ընդունվել է

ՀՀ ԱԺ պատգամավոր Արմեն Բաբայան	35-րդ հոդված, 1-ին մաս	Նախագծի 35-րդ հոդվածի համաձայն (Օրենքի ուժի մեջ մտնելը). «*Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:* *Սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել «Պետական վիճակագրության մասին», «Մարդահամարի մասին» եւ «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները*» : Պետական կառավարման համակարգի մարմինների մասին ՀՀ օրենքի նախագծով սահմանված է «ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ օրենքի ընդունման անհրաժեշտությունը, որն ուժի մեջ կմտնի նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր լիազորությունների ստանձնման օրը: Տվյալ օրենսդրական ակտով նախատեսվում են վիճակագրության բնագավառում պետական քաղաքականություն իրականացնող մարմինների՝ վիճակագրական Կոմիտեի, Պետական Խորհրդի, այդ մարմինների լիազորությունների, կազմավորման և կառավարման կարգի, նախագահի, անդամների նշանակման կարգի և ժամկետները վերաբերյալ լրացումներ և փոփոխություններ: Տվյալ պարագայում, «Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, և «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի նախագիծը սահմանում են տարբեր կարգավորումներ՝ կապված «Պետական վիճակագրության մասին» ՀՀ գործող	Առաջարկությունն ընդունվել է, փաթեթով ներկայացված նախագծերի ուժի մեջ մտնելու ժամկետները վերանայվել են, մասնավորապես՝ նախատեսվել է, որ դրանք ուժի մեջ են մտնում նորընտիր Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից իր պաշտոնի ստանձման օրը	Ընդունվել է

		օրենքը ուժը կորցրած ճանաչելու Նախագծի դրույթների, և «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ գործող օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության հետ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագիծը միտված է կարգավորելու ազգային վիճակագրական բնագավառի բոլոր հարաբերությունները, ուստի, Պետական կառավարման համակարգի մարմինների մասին ՀՀ օրենքի նախագծով սահմանված՝ «ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ օրենքի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է, այն ենթակա է լրամշակման:		
ՀՀ կառավարություն	1. 10-րդ հոդված, 3-րդ մասի 1-ին կետ 2. 14-րդ հոդվածի 1-ին մաս 3. 18-րդ հոդված 4-րդ մաս 4. 10-րդ հոդվածի 8-րդ մաս	1. Առաջարկվում է 10-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1) ընդունում է պաշտոնական վիճակագրության վերաբերյալ նորմատիվ և անհատական բնույթի որոշումներ՝ օրենքով նախատեսված դեպքերում»: 2 Առաջարկվում է «պետական» բառը հանել: 3. Առաջարկվում է «նախատեսված տվյալները» բառերից հետո լրացնել «այդ թվում վարչական ռեգիստրներից,» բառերը: 4. Առաջարկվում է հանել «տնտեսագիտական» բառը:		1. Ընդունվել է 2. Ընդունվել է 3. Ընդունվել է 4. Ընդունվել է